Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-593³-09.09.2014,01.10.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների բաժնեմասերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը իրականացվում է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-593-09.09.2014,01.10.2014-ՊԻ-010/1) և կից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	Քրեական օրենսգրքին վերաբերող դրույթները հանել Նախագծից:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.		Նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցամատյանի տեղեկատվությունը, ինչպես նաև քաղվածքները տրամադրվում են ՀՀ կառավարության կողմից նախատեսված կարգով, իսկ 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցամատյանի տեղեկատվությունը թղթային կրիչի վրա տրամադրվում է անձի դիմումի հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով: Հարկ է նկատել, որ նախագծով նաև չի սահմանվում տեղեկատվության տրամադրման կարգը:	Ընդունվել է:	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել են՝ «սույն օրենքով սահմանված կարգով» բառերը:
3.		Սպասարկման գրասենյակի գործառույթ	Ընդունվել է:	Նախագծի 3-րդ հոդվածի 11-րդ մասը խմբագրվել է հետևյալ

		իրականացնման միջոց նախատեսել նաև լիազոր մարմնի համացանցում բոլորին հասանելի ապահովված տիրույթը:		բովանդակությամբ. «սպասարկման գրասենյակ՝ Լիազոր մարմնի համացանցում բոլորին հասանելի ապահովված տիրույթ, սպասարկման գրասենյակի գործառույթներ իրականացնող նոտար»:
4.		Նախագծի 4-րդ հոդվածից հանել 1-ին կետը՝ հաշվի առնելով, որ տվյալ օրենքը նպատակ չի հետապնդում նպաստելու անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանվածությանը, այլ հանդիսանալու է տեղեկատվության աղբյուր:	Ընդունվել է:	Նախագծից հանվել է 4-րդ հոդվածի 1-ին կետը:
5.		Նախագծի հոդված 9-ի վերնագրում «Գործակալության» բառը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
6.		Նախագծի հոդված 12-ի 1-ին մասը համապատասխանեցնել էլեկտրոնային համակարգի կիրառման ձևաչափին:	Ընդունվել է:	Նախագծի հոդված 12-ի 1-ին մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ «Համացանցում բոլորին հասանելի լիազոր մարմնի կողմից վարվող ապահովված տիրույթում լրացվում են հետևյալ տվյալները.»:
7.		Նախագծի հոդված 13-ը հանել, քանի որ ըստ էության կրկնում է 12-րդ հոդվածի	Ընդունվել է:	Նախագծից հանվել է 13-րդ հոդվածը: Միաժամանակ, 12-րդ հոդվածը վերախմբագրվել է՝

		բովանդակությունը:		ներկայացվող տեղեկատվության ամբողջ ծավալը ներառելու նպատակով:
8.		Նախագծից հանել «նույնականացման համար» արտահայտությունը՝ փոխարինելով «գրանցման համար» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
9.		Խմբագրել 19-րդ հոդվածը ելնելով նրանից, որ փոփոխությունը գրանցելու դեպքում, փոփոխման ենթակա է միայն ապահովված իրավունքի առարկան: Կողմի փոփոխության դեպքում գրանցումը կհամարվի նոր գրանցում և ոչ թե փոփոխություն:	Ընդունվել է:	Նախագծի 19-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
10.		Նախագծի հոդված 22-ից հանել պարտապանի կողմից դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթը, քանի որ դիմումը ներկայացվելու է ապահովված անձի կողմից:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
11.		Քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետում «անշարժ գույքի գրավի պայմանագրերից ծագող իրենց իրավունքներն առավել ուշ գրանցած» բառերից հետո ավելացնել «կամ չգրանցած գրավառուների» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

12.		«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը անհրաժեշտ է լրամշակել այնպես, որ օդանավի նկատմամբ ապահովված իրավունքի վերաբերյալ տեղեկությունների գրանցումը պարտադիր բնույթ չկրի:	Ընդունվել է:	«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ. «Օդանավը գրավի առարկա հանդիսանալու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է ներկայացվել գրանցման «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:
13.		«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.3-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		կատարման համար անհրաժեշտ շարժական գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի շարժական գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հանձնարարագիր հրապարակել:»:		
14.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Ջհանգիրյան (առաջարկությունը ներկայացվել է բանավոր 05.12.2014թ. ՀՀ Ազգային Ժողովում տեղի ունեցած աշխատանքային քննարկման ժամանակ)	Հաշվի առնելով այն, որ նոտարները հասարակությանը հասանելի հանրային ցանց է՝ անհրաժեշտ է պայմանագրային հարաբերությունները հանել նոտարների համար, դրանով իսկ յուրաքանչյուր նոտար կիրականացնի սպասարկման գրասենյակի գործառույթներ՝ ապահովելով համակարգի մատչելիությունը և արդյունավետությունը:	Ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է: